ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 28

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2022թ. հունիսի 28-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **02.06.2022թ. «Օնոր-Ակադեմիա-08»-«Ալաշկերտ-08» (14B-069) հանդիպման ժամանակ, «Օնոր-Ակադեմիա-08»-«Ալաշկերտ-08» թիմերը FMS ծրագրով չէին լրացրել արձանագրությունը:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Օնոր-Ակադեմիա-08» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը՝ «Օնոր» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն»:
2) Հաստատված համարել «Ալաշկերտ-08» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը՝ «Ալաշկերտ» ՖԱ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն»:

2. **31.05.2022թ. «Նորք-04»-«Վան-1-04» (18B-072) հանդիպման ժամանակ, մրցակցին հարվածելու համար հանդիպման 68-րդ րոպեին «Նորք-04» թիմի ֆուտբոլիստ Ալեքսան Ազատի Արամյանին (31192) խաղից հեռացնելու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Նորք-04» թիմի ֆուտբոլիստ Ալեքսան Ազատի Արամյանի (31192) կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «Նորք-04» թիմի ֆուտբոլիստ Ալեքսան Ազատի Արամյանին (31192) որակազրկել 2 խաղով և «Նորք ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

3. **31.05.2022թ. «Նորք-04»-«Վան-1-04» (18B-072) հանդիպման ժամանակ, մրցակցին հարվածելու համար հանդիպման 68-րդ րոպեին «Վան-1-04» թիմի ֆուտբոլիստ Հարություն Անտոնի Անտոնյանին (31542) խաղից հեռացնելու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Վան-1-04» թիմի ֆուտբոլիստ Հարություն Անտոնի Անտոնյանի (31542) կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «Վան-1-04» թիմի ֆուտբոլիստ Հարություն Անտոնի Անտոնյանին (31542) որակազրկել 2 խաղով և «ՖԱ Վան» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

4. **05.06.2022թ. «Նորավանք-05»-«Օնոր Ակադեմիա-05» (17B-056) հանդիպման ժամանակ, «Օնոր Ակադեմիա-05» թիմը չի ներկայացրել խաղացողների հայտը:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Օնոր Ակադեմիա-05» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը կետը՝ «Օնոր» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն»:

5. **09.06.2022 «Բումֆորտ-08»-«ՎՖԴ-08» (14CF-002) խաղը տեղի է ունեցել 15 րոպե ուշացումով ՎՖԴ-08 թիմի ուշանալու պատճառով:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «ՎՖԴ-08» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 34-րդ կետը՝ «Վանաձորի ֆուտբոլի մասն. մ/պ մ/դպ» ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն»:

6. **10.06.2022թ. «Գանձասար-Կապան-07»-«Լ.Արցախ-08» (15B-077) խաղը չի կայացել Լ. Արցախ-08 թիմի խաղին չներկայանալու պատճառով:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Լ. Արցախ-08» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Լ. Արցախ-08» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով:

7. **29.05.2022թ. «Շիրակ-04»-«Փյունիկ-06» (18-17Գ-032) խաղը տեղի է ունեցել 15 րոպե ուշացումով՝ Փյունիկ-06 թիմի ուշանալու պատճառով:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Փյունիկ-06» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 34-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն»:

8. **14.06.2022թ. «Գանձասար-Կապան-07»-«Էրեբունի-07» (15B-045) խաղը սկսվել էր 30 րոպե ուշացումով Էրեբունի-07 թիմի ուշանալու պատճառով:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Էրեբունի-07» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 34-րդ կետը՝ «Համայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց հ.11 հիմնարկ»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն»:

9. **ՀՖՖ ՄԿԱ Բաժինը FMS համակարգի միջոցով ստացել է տեղեկություններ ուշացած ժամկետներում, մասնավորապես՝ 1) 16/06/2022-ին «Ուրարտու» ակումբից ստացել է տեղեկություն, որ 12/05/2022-ին խզվել է ֆուտբոլիստ Սերգեյ Մկրտչյանի հետ գործող պայմանագիրը, ինչպես նաև 13/05/2022-ին նույն ֆուտբոլիստի հետ կնքվել է նոր պայմանագիր, 2) 16/06/2022-ին «Ուրարտու» ակումբից ստացել է տեղեկություն, որ 04/05/2022-ին խզվել է ֆուտբոլիստ Նարեկ Աղասարյանի հետ գործող պայմանագիրը, ինչպես նաև 05/05/2022-ին նույն ֆուտբոլիստի հետ կնքվել է նոր պայմանագիր: Համաձայն ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի 15-րդ հոդվածի 1-ին կետի՝ ակումբի և ֆուտբոլիստի միջև կնքված պայմանագիրը, համաձայնագիրը, ինչպես նաև դրանցում բոլոր փոփոխություններն ու լրացումները ենթակա են ներկայացման ՀՖՖ գրանցման դրանք կնքվելուց հետո 15-օրյա ժամկետում:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

1) Հաստատված համարել «ՖԱ Ուրարտու ՄՀԿ» ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը (13/05/2022-ին Սերգեյ Մկրտչյանի հետ նոր պայմանագիր կնքելը և 15 օրյա ժամկետում ՀՖՖ գրանցման չներկայացնելը) և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 65-րդ կետը (առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված ակումբի նկատմամբ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար 1,000 ՀՀ դրամ)՝ «ՖԱ Ուրարտու ՄՀԿ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «ՖԱ Ուրարտու ՄՀԿ» ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը (05/05/2022-ին Նարեկ Աղասարյանի հետ նոր պայմանագիր կնքելը և 15 օրյա ժամկետում ՀՖՖ գրանցման չներկայացնելը) և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 65-րդ կետը (առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված ակումբի նկատմամբ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար 1,000 ՀՀ դրամ)՝ «ՖԱ Ուրարտու ՄՀԿ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանութապատիկի՝ 28.000 ՀՀ դրամի չափով:

10. **ՀՖՖ ՄԿԱ Բաժինը FMS համակարգի միջոցով ստացել է տեղեկություններ ուշացած ժամկետներում, մասնավորապես՝ 1) 15/06/2022-ին «Արարատ-Արմենիա» ակումբից ստացել է տեղեկություն, որ 16/05/2022-ին երկարաձգվել է ֆուտբոլիստ Սերգեյ Վակուլենկոյի հետ գործող պայմանագրի ժամկետը Համաձայն ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի 15-րդ հոդվածի 1-ին կետի՝ ակումբի և ֆուտբոլիստի միջև կնքված պայմանագիրը, համաձայնագիրը, ինչպես նաև դրանցում բոլոր փոփոխություններն ու լրացումները ենթակա են ներկայացման ՀՖՖ գրանցման դրանք կնքվելուց հետո 15-օրյա ժամկետում:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը (16/05/2022-ին ֆուտբոլիստ Սերգեյ Վակուլենկոյի հետ գործող պայմանագրի ժամկետը երկարաձգելը և 15 օրյա ժամկետում ՀՖՖ գրանցման չներկայացնելը) և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 65-րդ կետը (առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված ակումբի նկատմամբ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար 1,000 ՀՀ դրամ)՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնվեցապատիկի՝ 16.000 ՀՀ դրամի չափով:

<u>Հիշեցում՝</u>

1. **Հոդված 19. Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկումը**

Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումները ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում, իսկ այդ դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է գործի հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այդ հիմքերը ստանալու պահից:

2. **Հոդված 28. Պատասխանատվության միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները**

28.05 Սույն կանոնակարգում ներառված՝ ֆուտբոլիստի և/կամ թիմի անձնակազմի անդամի ստացած դեղին քարտերի հետ կապված որակազրկումները (սույն
կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերը) կիրառվում են առանց ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշման:

3. **Հոդված 25. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի և ակումբի պաշտոնյաների պատասխանատվությունը**

25.20 Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի, ակումբի պաշտոնյայի սույն կանոնակարգի 41-րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերով սահմանված խախտումների հաշվառումը կատարում է համապատասխան ակումբը՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշման:
25.21 25.20 կետի պահանջները ակումբի կողմից չպահպանելը հանգեցնում է այդ ակումբի նկատմամբ կարգապահական պատժամիջոցի՝ տեխնիկական պարտություն:

Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցների տուգանքները սահմանված են ՀՀ Մ-18-16 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների համար: Մ-15 և ցածր տարիքային խմբերի առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների տուգանքները և պատժամիջոցները սահմանված են նախորդի 50%-ի չափով: Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցները սահմանվում են նաև ՀՀ Սիրողական ֆուտբոլի առաջնություններին մասնակցող սուբյեկտների համար: